

**ՎԻԳԵՆ ԵՍԱՖՅԱՆ**

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության դատահրավական ապահովման բաժնի պետ, քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի խորհրդական,  
ՀՀ ԶՈՒ պահեստագործ փոխգնդապետ



## **ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԳՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

«Պետական ծառայության համակարգում զինվորական ծառայության գործառույթներն ու սկզբունքները» հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել զինվորական ծառայության ընդհանուր և հատուկ, ճյուղային և ինստիտուցիոնալ սկզբունքներին: Քննարկվել է իրավաբանական գրականության մեջ առկա այն տեսակետը, որ պետական ծառայության գլխավոր նպատակը պետության գործառույթների գործնական իրականացումն է և վերջինիս առջև ծառացած խնդիրների լուծումը, հասարակության բնականուն կենսագործունեության ապահովումը, ինչպես նաև հասարակական շահերի բավարարումը՝ հենվելով օրենսդրությամբ ամրագրված սկզբունքների և դրույթների վրա: Կարևորելով զինվորական ծառայությունը պետական ծառայության համակարգում հոդվածում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայության սկզբունքների համակարգված կիրառումը մի կողմից հնարավորություն կընձեռի ստեղծել անվտանգության և պաշտպանության բնագավառում արդյունավետ գործող և ազգային շահերին համապատասխանող կառավարման համակարգ, մյուս կողմից կապահովի զինծառայողների գործունեության համապատասխանությունը օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի դրույթներին:

**Հիմնարար քառեր-** Պետական ծառայող, զինվորական ծառայության խնդիրներ, պետական գործառույթ, պետական կադրային քաղաքականություն, պետական ծառայության սկզբունքներ:

Իրավաբանական գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ պետական ծառայության գլխավոր նպատակը պետության գործառույթների գործնական իրականացումն է, վերջինիս առջև ծառացած խնդիրների լուծումը, հասարակության բնականուն կենսագործունեության ապահովումը, հասարակական շահերի բավարարումը՝ հենվելով օրենսդրությամբ ամրագրված սկզբունքների և դրույթների վրա: Այս կարծիքից բխում է, որ զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի հիմնական նպատակը պետության գործառույթների գործնական իրագործումն է՝ նպատակաւորված վերջինիս անկախության, պետական ինքնիշխանության և տարածքային ամրողականության ապահովմանը, ինչպես նաև Սահմանադրությամբ և իրավական այլ ակտերով ամրագրված ռազմական անվտանգության ոլորտում հասարակական շահերի բավարարմանը: Զինվորական ծառայությունը կազմակերպվում է նաև պետության խնդիրների լուծման, վերջինիս գործառույթների և պետական մարմինների ու կազմակերպությունների լիազորությունների իրականացման նպատակով:

Ի՞նչ հարաբերակցություն ունեն զինվորական ծառայության խնդիրներն ու գործառույթները: Զինվորական ծառայության խնդիրներն ու գործառույթ-

ները խիստ փոխվապակցված, բայց ոչ նույնական հասկացություններ են: Զինվորական ծառայության խնդիրները սկզբունքային նշանակություն ունեն դրա գործառույթների համար և վերջիններիս անմիջական նախահիմքն են:

Քանի որ ներկայում պետական ծառայության գործառույթների հասկացությունն օրենսդրությամբ ամրագրված չէ, կարելի է ընդգծել, որ այն ունի միայն փաստական բնույթ:

Նշվածը վերաբերում է նաև զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության տարատեսակի: Բայց զինվորական ծառայության գործառույթների վերլուծությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի, քանզի հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել պետական-ծառայողական գործունեության մեջ վերջինիս դերն ու նշանակությունը և տեղը պետության սոցիալական համակարգում:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Պետական գործառույթներ իրականացնում են

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պետական իշխանության բոլոր մարմինները, սակայն պետության ինքնուրույնության և տարածքային ամբողջականության ապահովմանը նպատակադիրված պետական գործառույթներն իրականացնում են այն պետական մարմիններն ու կազմակերպությունները, որոնցում նախատեսված է զինվորական ծառայություն:

Զինվորական ծառայությունը գործառութային տեսակետից ներկայացնում է զինվորական-ծառայուղական հարաբերությունների սուբյեկտների գործողությունների ինքնուրույն և համեմատաբար ընդգծված ձևեր: Ներկայում պետական ծառայությունը ընդհանուր առմամբ հանգեցվում է պետական կառավարման գործառույթների իրականացմանը, այսինքն՝ որպես իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական, համակարգերում առկա կառավարչական գործունեություն: Անտարակույս, զինվորական ծառայությունն իրականացնում է հենց պետության գործառույթները՝ վերջինիս ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովումը (պաշտպանություն, անվտանգություն, սահմանների պահպանում, հասարակական կարգի անխաթարություն և այլն):<sup>2</sup>

Ընդհանուր առմամբ կարելի է համաձայնել Վ.Վոլոշինայի կարծիքին, որը պետական ծառայության գործառույթները բաժանում է իիմնականի, որոնք պարտադիր են վերջինիս կառուցվածքային բոլոր տարրերի համար (կառավարման գործառույթներ) ու հատուկ գործառույթների, որոնք բնորոշ են պետական ծառայության ձևերին և ուղղություններին:<sup>3</sup>

Կարծում ենք՝ զինվորական ծառայության բնուրագրման համար ընդհանուր գործառույթներ կարելի է համարել.

- պետական կադրային քաղաքականության և զինված ուժերի, այլ գործերի ու զինվորական կազմավորումների համարման իրականացումը՝ նկատի ունենալով զինծառայողների և քաղաքացիական ծառայողների մասնագիտական ունակություններն ու հնարավորությունները,

- զինվորական և զինված ուժերի կազմում քաղաքացիական հատուկ պաշտոնային հաստիքացուցակների ձևավորումն ու հետագա կարգավորումը,

- սոցիալ-իրավական պայմանների ու երաշխիքների հաստատումը, որոնք անհրաժեշտ են զինծառայողների և զինված ուժերում քաղաքացիական հատուկ ծառայողների բնականն և արդյունավետ գործունեության համար,

- զինվորական ծառայության և պաշտպանության ոլորտում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտպանության և պաշտպանության հատուկ պահպանումը (պետական սահմանների պահպանումը), հակասահրեկչական պայքարը և այլն: Այսպիսով, զինվորական ծառայության հատուկ գործառույթների իրականացման նպատակը պետական մարմիններին ու կազմակերպություններին օրենսդրությամբ առաջադրված խնդիրների լուծումն է:

Քյան հստակ կազմակերպումն ու դրա հետագա զարգացման պլանավորումը,

- զինծառայողների մասնագիտական պատրաստման, վերապատրաստման ու որակավորման բարձրացման կազմակերպումն ու մեթոդական դեկավորումը,

- զինծառայողների և զինված ուժերի քաղաքացիական հատուկ ծառայողների կարգավիճակով պայմանավորված պարտականությունների հստակեցումը,

- վերահսկողությունը զինծառայողների գործունեության նկատմամբ, ինչպես նաև նրանց ծառայողական գործունեության ընթացիկ վիճակի և արդյունավետություն վերլուծությունը,

- պետական-ծառայողական և զինվորական-ծառայողական հարաբերությունները կարգավորող նորմատիվի իրավական ակտերից բխող խնդիրների լուծմանը նպատականողված գործունեության համակարգումը և այլն:

Զինվորական ծառայության հատուկ գործառույթներն արտահայտում են զինծառայողների գործունեության առանձնահատկություններն այն բոլոր պետական մարմիններում ու կազմակերպություններում, որոնցում նախատեսված է զինվորական ծառայություն: Դա արտահայտվում է վերջիններիս համար սահմանված յուրահատուկ պարտականություններում: Զինծառայողների գործունեության առանձնահատկությունը պայմանավորված է զինվորական ծառայության յուրահատուկ պահանջների կատարմամբ, մասնավորապես, մարտական գործողություններին, արտակարգ իրավիճակներում և ուազմական դրույթան ժամանակ, ինչպես նաև զինված հակամարտությունների պայմաններում իրենց առաջադրված խնդիրների լուծումը, մարտական հերթապահությունը, սահմանապահ և պահակային ծառայությունը, մասնակցությունը ռազմաւումնական հավաքներին ու գորավարժություններին և այլ միջոցառումներին:

Ռազմական անվտանգության և պաշտպանության բնագավառում զինվորական ծառայությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ պետության ռազմական անվտանգության ու պաշտոնային հաստիքացուցակյան, պետության տարածքային ամբողջականության ապահովումը (պետական սահմանների պահպանումը), հակասահրեկչական պայքարը և այլն: Այսպիսով, զինվորական ծառայության հատուկ գործառույթների իրականացման նպատակը պետական մարմիններին ու կազմակերպություններին օրենսդրությամբ առաջադրված խնդիրների լուծումն է:

Պետական ծառայության ինստիտուտում յու-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րահատուկ տեղ ունեն պետական ծառայության, այդ թվում՝ զինվորական ծառայության սկզբունքները:

Վերջիններս, ինչպես իրավացիորեն բնորոշել է Վ.Մանոխինը, պահանջներ են, որոնք ներկայացվում են պետական ծառայությանն առնչվող բոլոր անձանց ու կազմակերպություններին, ունեն համընդիմանուր բնույթ և ընդգրկում են այդ ծառայության բովանդակությունը կազմող կազմակերպական, իրավական և մյուս կողմերը<sup>4</sup>:

Զինվորական ծառայության սկզբունքներն ընդգծում են նրա բնույթի և էության հիմնական հարցերը, արտահայտում ոչ միայն զինվորական ծառայության՝ որպես քաղաքացիների գործունեության յուրահատուկ ծե, այլև պետության ամբողջ ռազմական կազմավորման կազմակերպման և գործառության առավել էական կողմերը: Զինվորական ծառայության սկզբունքները բնորոշում են այդ համակարգում առկա բարդ փոխհարաբերությունների բովանդակությունը: Ունենալով գիտական բնույթ՝ վերջիններս հաստատուն իրավական հիմք են ստեղծում զինվորական ծառայության կազմակերպման, իրականացման և հետագա կատարելագործման համար: Այս առնչությամբ Յու.Ստարիլովն արդարացիորեն նշում է, որ պետական ծառայության սկզբունքներն արտահայտում են պետական ծառայութերի լիազորությունների իրականացման օբյեկտիվ օրինաչափությունները և որոշում գիտականորեն հիմնափորված ուղղությունները: Այդ սկզբունքների բացակայությունը կարող է հանգեցնել կամայականության, բյուրոկրատիզմի, անկազմակերպվածության, ապօրինության և անարդարության<sup>5</sup>: Ներկայումս օրենսդրության մեջ ամրագրված չէ ոչ՝ զինվորական ծառայության, ոչ՝ ել ընդհանրապես պետական ծառայության սկզբունքների բնորոշումը, բայց վերջիններս բվարկվում են որոշ օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերում<sup>6</sup>:

Այս հարցը կարգավորվել է Սահմանադրությամ՝ 2005թ. փոփոխություններով, որի համաձայն՝ հանրային ծառայության սկզբունքները կսահմանվեն օրենքով (30.2-րդ հոդված):

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են հանրային ծառայության հիմնական թվով 13 սկզբունքները, սակայն չի բացառվում, որ այլ օրենքներով կարող են նախատեսվել նաև այլ սկզբունքներ:

Զինվորական ծառայության սկզբունքները կարելի է ենթարկել հետևյալ համակարգվածության ընդհանուր (ամբողջ պետական ծառայության համար), հասուն (ընդհանուր զինվորական ծառայության համար) և մասնավոր կամ կոնկրետ-ինստիտուցիոնալ, որոնք բնութագրում են զինվորական ծառայության առանձին ենթախնսատիտուտները: Բայց զինվորական ծառայության այս սկզբունքները կիրառվում են միաժամանակ վերջիններիս ենթահամակարգերի շրջանակներում և որպես ընդհանուր ամբողջական համակարգ:

Պետական ծառայության սկզբունքներն ունեն համընդիմանուր բնույթ, այսինքն՝ տարածվում են պետական ծառայության բոլոր տեսակների վրա, և, հետևաբար, կարող ենք համարել պետական ծառայության ընդհանուր սկզբունքները: Թեև ՀՀ գործող օրենսդրության մեջ պետական ծառայության սկզբունքների հասկացությունը ընդհանրապես չի բնորոշվում, այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ դրանք այնպիսի հիմնարար չափանիշների, դրույթների ամբողջություն են, որի հենքի վրա կառուցվում է պետական ծառայության ամբողջ համակարգը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական ծառայության սկզբունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և այլ երկրների օրենսդրության միջև էական բովանդակային տարբերություններ չկան: Օրինակ, որպես պետական ծառայության ընդհանուր սկզբունքները Ուսուսատանի Դաշնության գործող օրենսդրությունն առանձնացնում է.

- մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը,

- իրավական և կազմակերպչական հիմքերի միանալանությունը դաշնային քաղաքացիական ծառայության և ՌԴ սուբյեկտների քաղաքացիական ծառայութերի համար,

- անկախ սերից, ուսայից, քաղաքացիությունից, ծագումից, գույքային դրույթունից, կրոնական հանդունքներից, ինչպես նաև այլ հանգանանքներից՝ անկախ հավասար մատչելիության ապահովում քաղաքացիական ծառայություն անցնելու համար,

- քաղաքացիական ծառայութերի արիեստավարժությունը և իրավասությունները,

- քաղաքացիական ծառայության կայունությունը և իրավարական նախագիծությունը,

- հասարակական միավորումների և քաղաքացիների հետ համագործակցությունը,

- քաղաքացիական ծառայութերի պաշտպանական ծառայությունն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում ոչ իրավաչափ միջամտությունից<sup>7</sup>:

Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության ոլորտի ընդհանուր բնույթի կարգավորման օրենսդրական ակտ է հանդիսանում «Հանրային ծառայության մասին» օրենքը, ինչպես,

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրինակ, «Ռուսաստանի Դաշնությունում պետական քաղաքացիական ծառայության մասին» ՌԴօրենքը և այլն, սակայն հիշյալ ոլորտին վերաբերող ընդհանուր հարցերը կարգավորվում են ծառայության առանձին տեսակները կանոնակարգող օրենսդրական ակտերի համարությամբ։ Այսպես, պետական ծառայության հիմնական սկզբունքները կարելի է առանձնացնել քաղաքացիական ծառայության, քաղաքացիական հասուկ ծառայության, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության, գինվորական ծառայության և մյուս տեսակներին վերաբերող օրենսդրական ակտերում և գիտական աշխատություններում՝ այդ ծառայությունների սկզբունքների մասին դրույթների վերլուծությամբ։ Հայաստանի Հանրապետությունում որպես պետական ծառայության հիմնական սկզբունքներ, «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն<sup>8</sup>, կարելի է նշել։

- ՀՀ Սահմանադրության և օրենքների գերակայությունը,
- մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը,
- հանրային ծառայության կայունությունը,
- օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարությունը,
- հանրային ծառայության իրապարակայնությունը,
- հանրային ծառայողների քաղաքական զավածությունը,
- քաղաքացիների համար հանրային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան,
- հանրային ծառայողների արհեստավարժությունը,
- հանրային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը,
- անկողմնակալությունը,
- ազնվորյունը,
- հարգանքը անձի և նրա իրավունքների հանդեպ
- պատասխանատվության զգացումը։

Ա. Նոգրաշչովը, նշելով, որ ընդհանուր սկզբունքները տարածվում են պետական ծառայության բոլոր տեսակների վրա, միաժամանակ ընդգծում է պետական ծառայության հասուկ ծառայությունների (ներառյալ գինվորական ծառայությունը) կազմակերպման համար անհրաժեշտ հասուկ սկզբունքները (պայմանավորված իրականացվող գործառույթների և լուծվող խնդիրների յուրահատկությամբ)։ Գինվորական ծառայության հասուկ սկզ-

բունքները բնութագրում են վերջինիս որպես պետական ծառայության առանձնահատուկ տեսակ և կիրառելի են գինվորական ծառայության բոլոր ենթատեսակների նկատմամբ։ Ընդ որում, գինվորական ծառայության հասուկ սկզբունքները պետք է արտահայտեն ոչ թե բոլոր, այլ միայն առավել էական, գլխավոր, օբյեկտիվորեն անհրաժեշտ օրինաշփությունները, հարաբերություններն ու կապերը։ Դրանք պետք է ընդգրկեն այնպիսի կատեգորիաներ, որոնք բնութագրական են գինվորական ծառայությանը՝ որպես միասնական սոցիալ-իրավական ինստիտուտի, այսինքն՝ պետք է կրեն ընդհանուր և ոչ թե մասնավոր բնույթ (գինվորական ծառայության համար)` ընդգծելով գինվորական ծառայության յուրահատուկ լինելն ու առանձնահատկությունները, վերջինիս տարբերությունը պետական ծառայության այլ տեսակներից։ Գինվորական ծառայության և գինձառայողի կարգավիճակի վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս խմբավորել գինվորական ծառայության հետևյալ հասուկ սկզբունքները. գինձառայողների իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելը, ինչպես նաև գինվորական ծառայության միանձնյա ու կենտրոնացված դեկավարումը, կոլեգիալ կառավարումը (նշանակած օրինականության և մարդասիրության սկզբունքների հետ ամրագրվել են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում):

Այդ ցանկն ընդգրկում է նաև գինվորական կարգապահության պահպանման անշեղ իրականացումը, գինձառայողների փոխհարաբերությունների ենթակարգումը, գինվորական ծառայության անընդհատությունը և մշտական մարտական պատրաստվածությունը, ինչպես նաև գինձառայողների՝ առավել իստուացված իրենց պատասխանատվության գիտակցումը, գինվորական պաշտոնների և կոչումների աստիճանակարգումը, գինձառայողների կարգավիճակով պայմանավորված՝ նրանց որոշակի իրավունքների ու ազատությունների սահմանափակումը<sup>10</sup>։

Ի դեպ, ՀՀ պաշտպանության հանրապետական գործադրի մարմնում գործում է նաև պետական ծառայության մեկ այլ տեսակ՝ քաղաքացիական հասուկ ծառայությունը, որը մասնագիտական գործունեություն է իրականացնում հիշյալ մարմնին վերապահված խնդիրների և գործառույթների շրջանակում։

Ինչպես «Քաղաքացիական հասուկ ծառայության մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՀ օրենքը, այնպես էլ «Քաղաքացիական ծառայության մա-

սին» և «Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքները նախատեսում են թվով և բովանդակությամբ նույնը 10-ը սկզբունքներ:

Սակայն, որպես պետական ծառայության տեսակներ՝ զինվորական ծառայությունը և քաղաքացիական հատուկ ծառայությունը, գործելով նոյն մարմնում, ունեն ծառայության տարրեր սկզբունքներ՝ նկատի ունենալով դրանց կողմից իրականացվող խնդիրների ու գործառույթների առանձնահատկությունները:

Զինվորական ծառայության բնույթից բխող ամենակարևոր սկզբունքներից է նաև զինվորական կարգապահության պահպանումը: Կարծում ենք՝ պետք է համաձայնել Մ. Դրագոմիրովի այն տեսակետին, որ զինվորական կարգապահությունը բարոյական, մտավոր և ֆիզիկական այն բոլոր ունակությունների ամբողջությունն է, անհրաժեշտ է, զինվորներն ու սպաները համապատասխանեն իրենց գործնական նշանակությանը»<sup>12</sup>:

Օրենսդրության այն հստակ բնորոշվում է ՀՀ Զինված ուժերի Կարգապահական կանոնագրքով, որի 2-րդ հոդվածում ամրագրված է, որ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով և հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է:

Վերջինս նպատակ չունի սահմանափակել մարդու իրավունքները և մերժել նախաձեռնությունը. զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, իրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

Զինվորական կարգապահությունն ապահովում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ:

Զինվորական կարգապահությունը պահպանվում է իր օրյեկտիվ և սուրյեկտիվ կողմերի միասնու-

թյամբ: Վերջինիս օրյեկտիվ կողմն արտացոլվում է իրավական նորմերում ու կանոններում, որոնցում ամրագրված են զինծառայողներին ներկայացվող պահանջները և դրանց կատարման համար սահմանված կարգը: Նշված նորմերն ու կանոններն իրավական ծառայություն զինվորական կարգապահության բովանդակությունը: Զինվորական կարգապահության սուրյեկտիվ կողմն արտահայտվում է սահմանված պահանջների փաստացի պահպանմամբ<sup>13</sup>:

Վերոշարադրյալից ենթադրվում է, որ զինվորական կարգապահությունն ունի յուրահատուկ առանձնահատկություններ, որոնք ամփոփվում են հետևյալում. զինվորական կարգապահության պահանջների տարածումը նաև արտածառայողական հարաբերությունների վրա, ինչպես նաև զինվորական կարգապահության համեմատաբար ավելի խիստ պահանջների ներառումը:

Այսպես, զինվորական կարգապահությունը զինծառայողին պարտավորեցնում է հավատարիմ լինել զինվորական երրում, խստորեն պահպանել ՀՀ Սահմանադրությունը, օրենքները և զինվորական կանոնադրություններով (կանոնագրքերով) սահմանված փոխհարաբերության կանոնները և այլն: Ընդ որում, պատահական չէ, որ զինվորական կարգապահության պահանջների խախտման համար սահմանված է ավելի խիստ պատասխանատվության միջոցներ, քան պետական ծառայության այլ տեսակների համար:

Այսպես, զինվորական ծառայության ընթացքում հրամանը չկատարելու, ծառայության վայրն ինքնական բողնություն համար նախատեսված է քրեական պատասխանատվություն<sup>13</sup>, իսկ նոյն արարեների համար պետական այլ ծառայողները ենթարկվում են կարգապահական պատասխանատվության<sup>14</sup>:

Ընդհանրապես ծառայողական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության ենթարկելու սկզբունքը պետական ծառայության ընդհանուր սկզբունք է: Սակայն զինվորական ծառայության մասին օրենսդրության վերլուծությամբ պարզվում է, որ նշված սկզբունքը զինվորական-ծառայողական գործունեության ոլորտում ավելի է խստացվում, և նախատեսվում են իրավաբանական պատասխանատվության ավելի խիստ միջոցներ: Հիրավի, զինվորական ծառայության բնագավառում քննարկվող սկզբունքը ներկայացված է երկակի:

Նախ՝ զինծառայողների իրավախսահատումների համար նրանց նկատմամբ, ինչպես արդեն նշվեց, կիրառվում են իրավաբանական պատասխանա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վուրյան ավելի խիստ միջոցներ, քան նույնափառ արարքների համար պետական այլ ծառայողների նկատմամբ:

Երկրորդ՝ զինծառայողներն իրավաբանական պատասխանատվության են ենթարկվում ոչ միայն իրենց ծառայողական ու հատուկ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, այլև ծառայության նկատմամբ անփոյք վերաբերմունք դրսերելու, կանոնագրքերով սահմանված ծառայություն կրելու կանոնները խախտելու, ուղղմական գույքը փչացնելու, վատնելու կամ ուրիշին հանձնելու համար և այլն:

Զինվորական ծառայության հատուկ սկզբունքների շարքում պետք է առանձնացնել նաև զինծառայողների իրավական կարգավիճակով պայմանավորված նրանց որոշակի իրավունքների և օրինական ազատությունների սահմանափակումը։ Այդ սկզբունքի առնչությամբ հարկ է նշել, որ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքը հստակ և ամփոփիչ սահմանում է զինծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակումները։

Նրանք չեն կարող կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքից, լինել Ազգային ժողովի պատգամավոր, գրադեսնել ընտրովի կամ այլ պաշտոններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արիեստակցական միության, կազմակերպել գործադրություններ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցել դրանց, անձամբ գրադեսնել ձեռնարկատիրական գործունեությամբ և այլն<sup>15</sup>։

Իրավաբանական գրականության մեջ բավականին հաճախ նշվում է նաև զինվորական ծառայության ճյուղային և կոնկրետ՝ ինստիտուցիոնալ, սկզբունքների առկայության մասին<sup>16</sup>, որոնք տարածվում են ոչ թե զինվորական ծառայության ամբողջ ինստիտուտի, այլ միայն նրա որոշակի տարրերի վրա։

Ճյուղային սկզբունքներ ասելով, կարծում ենք, պետք է նկատի ունենալ զինվորական ծառայության այն հատուկ սկզբունքները, որոնք բնութագրում են զինծառայողների գործունեության յուրահատկությունը՝ պետական առանձին մարմիններում ու կազմակերպություններում զինվորական ծառայություն անցնելիս, իսկ կոնկրետ-ինստիտուցիոնալ սկզբունքները բնութագրում են զինվորական-ծառայուղական գործունեության առնչվող առանձին հարցեր։ Վերջիններիս շարքին կարելի է դասել խրախուսանքի կիրառումը, զինծառայողների որակավորումը, սոցիալ-իրավական պաշտպանվածությունը, զինվորական ծառայություն անցնելու անվտանգության ամփոփումը և այլն։

Քանի որ զինվորական ծառայությունն իրականացվում է պետության անվտանգության ու պաշտպանության խնդիրների լուծման նպատակով, այսինքն՝ ապահովում է պետական ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, այն բավականին մեծ ռիսկային վտանգներ ունի ինչպես զինծառայողների կյանքի և առողջության, այնպես էլ ազգաբնակչության համար, ուստի գտնում ենք, որ զինվորական ծառայության սկզբունքները՝ որպես օրինաչափություններ, պետք է հստակորեն ամրագրվեն գործող օրենսդրության մեջ։

Զինվորական ծառայության սկզբունքների համակարգված կիրառումը մի կողմից հնարավորություն կընձեռի ստեղծել անվտանգության և պաշտպանության բնագավառում արդյունավետ գործող և ազգային շահերին հաճապատասխանող կառավարման համակարգ, մյուս կողմից կապահովի զինծառայողների գործունեության համապատասխանությունը օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի դրույթներին, քանի որ այդ գործունեությունն իր էությամբ պետք է հիմնված լինի վերջիններիս վրա։

<sup>1</sup> Տե՛ս Старилов Ю.Н. Государственная служба в Российской Федерации: теоретико-правовое исследование// Воронежский государственный университет. 1996, С. 28.

<sup>2</sup> Տե՛ս Атаманчук Г.В. Теория государственного управления. Курс лекции, М., 1997, С. 259-260.

<sup>3</sup> Տե՛ս Волошина В.В. Правовые проблемы регулирования государственной службы в Российской Федерации. Дисс. канд.юр.наук. М. 1996, С. 27-28.

<sup>4</sup> Տե՛ս Манохин В.М. Советская государственная служба, М., Юридлит., 1966, С. 16.

<sup>5</sup> Տե՛ս Старилов Ю.Н., նշված աշխատությունը, էջ 201-202:

<sup>6</sup> Տե՛ս օրինակ, «Պաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը (ՀՀ ՊՍ 2002/1, 09.01.2002),

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը (<sup>ՀՀ</sup> ՊՍ N26(201), 19.07.02), «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 5-րդ հոդված (<sup>ՀՀ</sup> ՊՍ, 35(701), 15.07.09) և այլն:

<sup>7</sup> Ավելի մանրամասն տես՝ Федеральныи закон от 27 июля 1995г. N79-ФЗ ”О государственной гражданской службе Российской Федерации”.

<sup>8</sup> Տես «Հանրային ծառայության մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 6-րդ հոդվածը (<sup>ՀՀ</sup> ՊՍ 2011.06.17/37(840));

<sup>9</sup> Տես Հոզդրաչյան Ա.Փ. Գосударственная служба. Учебник для подготовки государственных служащих, М., Статут., 1999, С. 53, 56.

<sup>10</sup> Տես «Զինվորական ծառայություն անցնելու մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը (<sup>ՀՀ</sup> ՊՍ N26(201), 19.07.02) և «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին»,

«Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» <sup>ՀՀ</sup> օրենքների 5-րդ հոդվածները:

<sup>11</sup> Տես Դրагомиров Մ.И. Дисциплина, субординация, чинопочитание/Избранные труды, М., 1956, С. 383.

<sup>12</sup> Տես «ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի» 2-րդ հոդվածը (<sup>ՀՀ</sup> ՊՍ 2012.04.18/20(894));

<sup>13</sup> Տես ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ և 361-րդ հոդվածները:

<sup>14</sup> Տես, օրինակ, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 33-րդ հոդվածը:

<sup>15</sup> Տես «Զինվորական ծառայություն անցնելու մասին» <sup>ՀՀ</sup> օրենքի 1-ին հոդվածը (<sup>ՀՀ</sup> ՊՍ 2002/26, 19.07.2002);

<sup>16</sup> Տես Старилов Ю.Н., վերոնշյալ աշխատությունը, էջ 106:

Վիգեն Եսաֆյան

Начальник отдела судебно-правового обеспечения  
юридического управления министерства обороны РА,  
советник первого класса гражданской службы,  
подполковник запаса ВС РА.

## РЕЗЮМЕ

### *Функции и принципы военной службы в системе государственной службы*

В рамках статьи обсуждаются общие и специфические, отраслевые и институциональные принципы военной службы, обсуждается в юридической литературе мнение, что главная цель государственной службы это реализация функций и решений задач государства, удовлетворение общественных интересов на основе законодательства.

Анализ важности военной службы в системе государственной службы, показывает, что систематическое применение принципов военной службы с одной стороны даст возможность создать эффективную систему управления в сфере безопасности и обороны в соответствии с национальными интересами, а с другой стороны будет обеспечивать соблюдение реализации функций военнослужащих в соответствие законам и правилам других положений.

**Ключевые слова:** государственный служащий, задачи военной службы, государственные функции, государственная кадровая политика, принципы государственной службы.

Vigen Yesafyan

Head of Judicial legal Support Branch of the  
Law Department of the Ministry of Defense,  
1-st class counsellor of the special civilian service

## SUMMARY

### *The functions and principles of the military service in the system of the state service*

The topic of general and specific, sectoral and institutional principals was touched upon in this article. There were discussed the view, existing in legal literature, that the main aim of the state service is to practically implement state functions and the problems that occurred during the time, to provide normal activity of the society, as well as the satisfaction of the public interest on the bases of the principals and provisions which are fixed by legislation. Giving importance to the military service within the system of the state service, the analysis in this article shows that coordinated use of the principals of the military service will provide an opportunity to create a system of government in accordance with national interests, which will operate efficiently in the field of security and defense, on the other hand it will provide the activity of militants compliance with laws and provisions of other normative legal acts.

**Keywords:** civil servant, problems of the military service, state functions, state HR policy, the principles of the state service.